

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված Արժույթի միջազգային հիմնադրամի Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից 33 Ազգային վիճակագրական ծառայությունը 2000թ. հունվար-սեպտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 10 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի¹

հազ.մարդ

	Ամբողջ բնակչությունը	կին	տղամարդ
2000 թ. հունվարի 1-ի դրությամբ	3803.4	1956.6	1846.8
2000 թ. հուլիսի 1-ի դրությամբ	3803.6	1956.7	1846.9
2000 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ	3803.4	1956.9	1846.5

2. Կյանքի սպասվելիք տևողությունն հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 1999թ.²

տարի

Ամբողջ բնակչությունը	կին	տղամարդ
73.2	75.5	70.7

3. Մանկամահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

1000 ծնվածի հաշվով

	Ընդամենը	աղջիկներ	տղամեր
1999թ. հունվար-դեկտեմբեր	15.4	13.4	17.2
2000թ. հունվար-հունիս	14.9	13.0	16.6
2000թ. հունվար-սեպտեմբեր	14.8	12.9	16.5

¹ Առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերհաշվառման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող առավել արժանահավատ տվյալներն առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ 33 քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-1999թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակն ավելի քան 622 հազար մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: 3արկ է նշել, որ սկսած 2000թ. մայիս-հունիս ամիսներից տեղեկություններ են ստացվել նաև երկաթգծով և ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոբուսներով, երթուղային տաքսիներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ:

² Կյանքի սպասվելիք տևողության հաշվարկի համար հիմք են հանդիսանում տվյալ տարվա մահացության սեռատարիքային գործակիցները, ընդ որում նշանակալից է մինչև 1 տարեկան հասակում մահացության մակարդակը:

4.Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

1000 ծնվածի հաշվով

	Ընդամենը	աղջիկներ	տղաներ
1999թ. հունվար-դեկտեմբեր	19.2	17.3	20.9
2000թ. հունվար-հունիս	18.1	16.3	19.7
2000թ. հունվար-սեպտեմբեր	17.8	16.0	19.4

5.Մայրական մահացությունը 1999թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 32.9 (12 դեպք)՝ 100000 կենդանածինների հաշվով, իսկ 2000թ. հունվար-հոկտեմբերին՝ 46.8 (12 դեպք): Հարկ է նշել, որ 1999թ. 12 ամիսների ընթացքում է գրանցվել այդքան մայրամահացության դեպք, միայն հուլիս ամսին տեղի է ունեցել մայրամահացության 4 դեպք:

6. Հակաբեղմնավորիչների օգտագործման հաճախականությունը 2000թ. հունվար-սեպտեմբերին 1000 պտղաբեր տարիքի (ֆերտիլային) կնոջ հաշվով կազմել է 47.2 դեպք:

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2000/2001 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2000թ. հունվար-մարտին կազմել է 34483 դրամ կամ 65 ԱՄՆ դոլար, հունվար-հունիսին՝ համապատասխանաբար 91633 և 172, իսկ հունվար-սեպտեմբերին՝ 177244 դրամ կամ 331 ԱՄՆ դոլար:

14. Գործազրկության մակարդակը 2000 թ. սեպտեմբերին կազմել է 11.2 տոկոս և 1999թ. նկատմամբ նվազել է 0.2 տոկոսային կետով: Ընդ որում կանանց գործազրկության մակարդակը 2000թ. սեպտեմբերին կազմել է 14.2 տոկոս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 0.4 տոկոսային կետով, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը կազմել է 8.1 տոկոս և ավելացել 0.1 տոկոսային կետով:

15. 2000թ. հունվար-սեպտեմբերին **տնտեսության մեջ զբաղված է եղել** ՀՀ ողջ բնակչության 33.8 տոկոսը, այդ թվում կանայք 32.2 տոկոս, տղամարդիկ 35.5 տոկոս:

Բացի վերոհիշյալներից, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ներկայացնում է հետևյալ լրացուցիչ **սոցիալական ցուցանիշները**.

Հանցագործությունների քանակը 10 հազ. բնակչի հաշվով 2000թ. ինն ամիսներին	24.1 դեպք
Նոտարի կողմից վավերացված գործարքների քանակը 1000 բնակչի հաշվով 2000թ. ինն ամիսներին	48.2
Մեկ գործարքի հաշվով գանձված պետական տուրքը 2000թ. ինն ամիսներին, դրամ	3241.9